ԸՆՏԱՆԻՔԻ՝ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԴԵՐԻ ԿԱՐԵՈՐՈՒՄԸ ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՍԱՏՐՅԱՆ Զ.Ա.

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՊՄՀ

Ընտանիքի՝ որպես սոցիալական ինստիտուտի ձևավորումն ու զարգացումն սկսվել է հասարակության ձևավորման հետ միաժամանակ, և նրա էությունն ու գործառույթները բոլոր ժամանակներում եղել են քննարկման առարկա: Ինչպես նշում է Գ.Հակոբյանը, «Ընտանիքը մարդու կյանքում սոցիալական առաջին հանրությունն է, որի շնորհիվ նա հաղորդակցվում է մշակութային արժեքներին, յուրացնում սոցիալական դերեր, ձեռք բերում հասարակական վարքի փորձ»[4, էջ 109]: Անգնահատելի է ընտանիքի՝ որպես սոցիալ-մշակութային դաստիարակչական միջավայրի դերը երեխայի համակողմանի դաստիարակության գործում: Նրանով են պայմանավորված հասարակության վերարտադրության, աճող սերնդի դաստիարակության, սոցիալականացման, նյութական ապահովության, հոգևոր կայուն զարգացումն իրականացնելու հնարավորությունները:

Ընտանիքը, որպես դաստիարակության գործընթացի սուբյեկտ, հասարակական համակարգի մի մաս, ունի բազմաթիվ գործառույթներ, սակայն նրա կարևորագույն գործառույթը երեխաների դաստիարակությունն է, նրանց սոցիալականացումն ու զարգացումը:

Ընտանիքի դերը, նրա դաստիարակչական գործառույթը կարևորվել է դեռևս վաղ ժամանակներից սկսած: Հայ ժողովրդական բանահյուսության մեջ, հեքիաթներում, «Սասուցի Դավիթ» էպոսում, բազմաթիվ մանկավարժների աշխատություններում առաջնային է համարվել ընտանիքի՝ սոցիալ-մշակութային դաստիարակչական միջավայրի դերը երեխայի համակողմանի դաստիարակության գործում: Ըստ Գ. Հակոբյանի՝ «Ընտանիքի էթնոմանկավարժական գործառույթներն արտահայտվում են նրանով, որ ներընտանեկան հաղորդակցման ընթացքում ավագ սերնդի կյանքի փորձը, նրա մշակութային զարգացվածության աստիճանը, վարքի կարծրատիպերը, օրինակները, բարոյական պատկերացումները, նորմերը, ընտանեկան ավանդույթները հաղորդվում են հաջորդ սերնդին»[4, էջ112]: Իհարկե՛, այս ամենի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ստեղծել սոցիալ–մշակութային նպաստավոր պայմաններ: Այսինքն՝ ընտանիքի հիմնական նպատակը եղել և մնում է երեխայի զարգացման համար սոցիալական հարմարավետ կենսամիջավայրի, գործունեության պայմանների ապահովումը:

Ամեն ինչ սկսվում է մանկությունից. երեխայի խոսքի, վարքի, բարոյական արժեքների քաղաքացիական դիրքորոշումների, կենսական իդեալների ձևավորումը, ազգային ավանդույթների իմացությունը, ընկերների ընտրությունը և փոխհարաբերությունները շրջապատի հետ և այս ամենի սկիզբը դրվում է ընտանիքում: Ընտանիքում են դրվում երեխայի հոգևոր և մշակութային կյանքի հիմքերը. «Ընտանիքը ոչ միայն հաջորդ սերնդին է փոխանցում տվյալ ժամանակներին բնորոշ և իրավական տեսք ստացած արժեքներն ու համակեցության նորմերը, այլ նաև լինելով հստակ դերակատարություն ունեցող հաստատություն, փոխանցում է՝ նոր սերունդներին մեր նախապապերի մասին առասպելները՝ նրանց ապրելակերպը, կայնքի կանոնակարգման կենսաբանական ու ընկերային մշակույթը»[3, էջ 82-83]:

Երեխայի ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրը տարբեր ժամանակներում հուզել է հայ հասարակական գործիչներին, մանկավարժներին, գրողներին՝ Մ. Մաշտոցին, Մ. Խորենացուն, Խ.Աբովյանին, Մ. Թաղիադյանին, Մ. Նալբանդյանին, Ռաֆֆուն, Ա. Բահաթրյանին, Մ. Մամուրյանին, Հ. Հինդլյանին, Ի. Հարությունյանին և այլոց: Այսպես, կարևորելով ընտանիքի դերը բանականությամբ ապրելու և աճող սերնդին դաստիարակելու գործում՝ Մեսրոպ Մաշտոցը նշում էր, որ միայն ընտանիքի շնորհիվ է, որ հասարակության մեջ կարող է դաստիարակվել առողջ սերունդ, որն իր հերթին պետք է գեղեցկացներ սոցիալական իրականությունը [2, էջ 107]:

Մ. Խորենացու կարծիքով, «Ընտանիքը բարձր ընկերային, բարոյական, և վարքաբանական նշանակություն ունեցող սոցիալական երևույթ է: Եվ միայն ընտանիքի ստեղծման շնորհիվ է, որ նա տարբերակում է զգայական ու հոգևոր սերը: Եթե զգայական սերը սահմանափակվում է միայն գեղեցիկ ձևի գնահատմամաբ, ապա հոգևոր սերը արդյունք է մարդու բանական և բարոյական գործունեության» [8, էջ 131]:

19-րդ դարի հայ մանկավարժական մտքի պատմության մեջ Մեսրոպ Թաղիադյանն առաջինն էր, որ ազգի անվտագության, լուսավորության առաջընթացի ապահովման դիրքերից հիմնավորեց կնոջ կրթության կարևորությունը երեխաների ընտանեկան դաստիարակության գործում: Նա գտնում էր. որ երեխայի դաստիարակության առաջին դպրոցն ընտանիքն է, և նրա հոգեկան աշխարհի մշակումը պետք է սկել ծնված օրից. «Տղայոց դաստիարակությունն գրեթե յուրյանց կենաց հետ պետք է սկսվի և մին տղա հաշխարհ գալեն իսկույն պիտի սկսի կրթվել, որ հետայնու մինչև ի մահն բարեկիրթ ու երջանիկ լինի»: [5, էջ 57] Մեծ մանկավարժը և խորհուրդ էր տալիս ծնողներին. «Տղայդ բարին և չարն ճանաչել սկսելեն, ժամանակ մի թողուր անցանել, իսկույն սկսիր յուր պարտիքն հասկացանել. և ամենայն բանից հառաջ յուր ստեղծողին ճանաչել տուր ինքյան, որպեսզի յուր կրթության հիմն բարեպաշտություն լինի», ինչպես նաև զգուշացնում էր. «Պզտկուց թող սովորի յուր կիրքն ու բարկությունը զսպելո համ

որպեսզի մեծանելեն գերի չլինի նոցա, և փուճ տեղն չափսոսա» [5, էջ 58-59]: Միաժամանակ մեծ ազգասերը խորապես համոզված էր, որ ճշմարիտ որդեսիրությունը պետք է երևա դաստիարակության մեջ, և երեխայի ծնողները, որպես առաջին դաստիարակներ, պետք է նրան դաստիարակեն ազգային ոգով ու դա պետք է անեն իրենց կենդանի օրինակով ու վարքագծով:

Ընտանիքի՝ որպես սոցիալ-մշակութային դաստիարակչական միջավայրի դերը խորապես կարևորվել է հայ մեծ լուսավորիչ, մանկավարժ Խաչատուր Աբովյանի մանկավարժական աշխատություններում: Որպես մեծ մանկավարժ՝ հաստատելով, որ երեխայի ձևավորման և սոցիալականացման առաջին միջավայրը ընտանիքն է՝ նա իր «Պատմություն Տիգրանի, կամ բարոյական խրատներ հայ մանուկների համար» աշխատությունում ցույց է տալիս, թե ինչպես է ընտանիքի կենցաղը, նիստ ու կացը, սովորույթները, մեծահասակների՝ պարոն Տիգրանի, վարժապետ Կարապետի և այլոց օրինակը, վարքագիծը իրենց կնիքը դնում իր հերոսների՝ Վարդանի, Ստեփանի, Եղիսաբեթի մտավոր, բարոյական, աշխատանքային, մարդասիրական որակների, կենցաղային մշակույթի ձևավորման վրա: Նա համարում էր, որ ընտանեկան դաստիարակությունը դպրոցական դաստիարակության հիմքն է և «Հետևապես ընտանիքը և դպրոցը երեխաների մտավոր և բարոյական աճման գործում պետք է նույն նպատակները հետապնդեն և փոխադարձաբար նեցուկ հանդիսանան միմյանց» [5, էջ 66]:

Ընտանեկան դաստիարակության հարցերին խորությամբ անդրադարձել է նաև Ղ. Աղայանը: Իր «Խորհրդածություն դաստիարակության վերա» աշխատության մեջ մեծ մանկավարժը անդրադարձել է երեխայի ընտանեկան միջավայրի կազմակերպման հարցերին՝ դրանում կարևոր դեր հատկացնելով մորը. «Մանուկները ուրիշ բան չեն, բայց եթե ազգի կյանքը, և այդ կյանքը կնոջ ձեռքին է, հետևաբար ազգի բախտը, ապագան ընտանյաց մայրերի ձեռքին է»[7, էջ 53]: Նա թեև երեխայի առաջին դաստիարակ համարում էր մորը, սակայն մեծ տեղ էր հատկացնում ծնողների բարոյական ներգործությանը՝ իրավացիորեն նշելով, որ. «Երեխան կյանքի մեջ մտնելուն պես, նորան մի առաջնորդող է պետք, բայց ոչ կույր առաջնորդ, այլ երեխայական բնության քաջահմուտ և զավակասեր մի ծնող, որ հոգուտ յուր մանկան առաքինության զսպի յուր ընտանեկան գայթակղեցուցիչ կիրքերը և բազմակերպ նյութերով զարգացնե երեխայի քնքույշ զգացմունքը առաքինության մեջ» [1, էջ 298]: Այսինքն՝ Ղ. Աղայանը գտնում էր, որ երեխայի սոցիալականացման, կրթության կազմակերպման գործում վճռական դեր են կատարում ծնող-երեխա հարաբերությունները, ընտանիքի կենսակերպը, ընտանեկան բարոյական արժեքները, ծնողների կողմից իրենց գործառույթների պատշաճ կատարումը: Միևնույն ժամանակ, նա նշում էր, որ. «Ընտանիքը վճռական նշանակություն ունի երեխաների

դպրոցական ուսման ընթացքը որոշելու բնագավառում» և ապա շարունակում է. «Դպրոցական կրթությունը պետք է ընտանիքի կրթության շարունակությունը լինի» [1, էջ 139]: Այստեղից հետևում է, որ Ղ. Աղայանը բարձրացնում է ընտանիքում երեխային՝ դպրոցին նախապատրաստելու կարևոր խնդիրը. երեխան մտավոր ի՞նչ պաշարով է գալիս դպրոց, որի վրա պետք է կառուցվի նրա հիմնական կրթության շենքը: Մեծ մանկավարժի այսօրինակ դիտարկումները այսօր էլ արդիական հնչեղություն ունեն և շատ ուսանելի են:

Իր ժամանակից առաջ անցած պիտի համարենք նաև հայ մեծ վիպասան, ժողովրդասեր, հայրենասեր Ռաֆֆու՝ ընտանիքի, որպես երեխայի սոցիալականացման կարևորագույն միջավայրի բնութագրման մասին դիտարկումները. «Ընտանիքը երեխայի մթնոլորտն է, նրա մեջ են աճում և զարգանում երեխայի մտավոր ուժերը, նրա հոգեկան զորությունները և նրա բարոյական հատկությունները, բոլորն այն չափով, ինչ չափով նպաստում է նրան գերդաստանի կրթողական ազդեցությանը և այն ձևով, որպիսի կերպարանք է տալիս նրան դաստիարակող ոգին» [6, էջ 113]:

Երեխայի կյանքը սկիզբ է առնում ընտանիքում, ընտանեկան միջավայրում են ձևավորվում նրա առաջին տպավորությունները և հետագայում՝ շրջապատի լավ ու վատ ազդեցությունների տակ է ձևավորվում նրա վարքագիծը, արժեհամակարգը, ուստի ընտանիքի բարոյական պարտքն է իր կենցաղով, ընտանեկան բարեկիրթ հարաբերություններով օրինակ ծառայել նրա համար՝ դրանով իսկ դնելով դաստիարակության հիմքերը: Իհարկե, Ռաֆֆին ընտանիքը միակ սոցիալ-մշակութային միջավայրը չէր համարում: Նա գտնում էր, որ հասարակական միջավայրի դրական և բացասական ազդեցությունները երեխայի վրա նույնպես մեծ են, ուստի անհրաժեշտ է համարում բացասական ազդեցություններից հեռու պահել երեխային՝ այդ գործընթացում կարևորելով ընտանիքի և դպրոցի համագործակցությունը: «Երեխաների դաստիարակության առաջին օջախը նախ և առաջ պետք է լինի ընտանիքը: Ընտանեկան ներգործությունը ազգային առանձնահատկությունների պահպանման» հիմքն է: Այսպես էր բնորոշում ընտանիքի սոցիալական գործառույթը տաղանդաշատ մանկավարժ և հոգեբան, «ընտանեկան դաստիարակության ջատագով» Իսահակ Հարությունյանը: Եվ դիմելով հայ մայրերին՝ նա կոչ էր անում.«Հայ ժողովրդի փրկության խարիսխն ընտանիքն է. հայ ընտանիքի խարիսխը դու՛ք եք, հա՛յ մայրեր, ուրախացե՛ք և վշտացե՛ք Գերտրուդի ուրախություններով ու վշտերով և ձեր փայփայած քնքուշ զավակներին սնուցե՛ք Գերտրուդի ստինքով. խելքով, սրտով և զգացմունքով տոգորված նոր սերունդ է հարկավոր հայ ժողովրդին»[6, էջ 481]:

Այսպիսով, դիտարկելով հայ մանկավարժական մտքի պատմության մեջ ընտանիքի՝ որպես սոցիալ-մշակութային դաստիարակչական միջավայրի դերի կարևորման հարցը

հանգեցինք այն հետևության, որ սկսած Մեսրոպ Մաշտոցից մինչև 20-րդ դարի սկիզբը՝ հայ մանկավարժների մեծ մասը, ընտանիքը համարելով երեխայի սոցիալականացման առաջնային ինստիտուտ, կարևորել են նրանում երեխայի համար սոցիալ-մշակութային դաստիարակչական միջավայրի ապահովումը, որպես երեխայի համակողմանի դաստիարակության նախասկիզբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Ղ., Երկերի ծողովածու, հ. 4, Երևան, 1969:
2. Գասպարյան Յու., Սոցիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում 4-8-րդ դարերում, Երևան, 2014:
3. Հարությունյան Է.Ա., Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Երևան, 2004:
4. Հակոբյան Գ., Էթնոմանկավարժություն, Երևան, <2015:
5. Հայ մանկավարժներ/կազմող և խմբագիր Ա.Շավարշյան/, գիրք Ա, Երևան, 1961:
6. Հայ մանկավարժներ/կազմող և խմբագիր Ա.Շավարշյան/, գիրք Բ, Երևան, 1961:
7. Ղ. Աղայանի մանկավարժական ժառանգությունը և նրա այժմեականությունը, Երևան, 1991:
8. Մ.Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1997:
9. «Մշակ», 1877, թիվ 89:
10. Շավարշյան Ա., Աստվածատրյան Վ. Ասատրյան Ա., Ղ. *Աղայանը* հայ *մանկավարժ*, Երևան, *1941*:

THE IMPORTANCE OF THE ROLE OF THE FAMILY AS A SOCIO-CULTURAL EDUCATIONAL ENVIRONMENT IN THE HISTORY OF ARMENIAN PEDAGOGICAL THOUGHT

The article discusses the role of the family as a socio-cultural educational environment in the history of Armenian pedagogical thought. In particular, reference was made to M. Mashtots's, M. Khorenatsi's, M. Taghiadyan's, Kh. Abovyan's, Raffi's, I. Harutyunyan's and G. Hakobyan's observations and opinions on the issues of educational, social functions of the family, providing a comfortable environment for the child.

Keywords: *family, upbringing, childhood, socialization, Armenian pedagogical history, socio-cultural environment, ethno-pedagogy*